

31.01.2024

Ծանուցում <<Հայաստանի Էլեկտրական ցանցեր>> ՓԲ ընկերության դիմումատու Արթուր Սանասարի Չուրաբյանին

Հայտատու՝ <<Հայաստանի Էլեկտրական ցանցեր>> ՓԲԸ

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 25.12.2019 թվականի թիվ 523-Ն որոշմամբ հաստատված կանոնների 8-րդ կետ

Ձեր կողմից 18.05.2022 թվականին <<Հայաստանի Էլեկտրական ցանցեր>> ՓԲ ընկերությանն Է ներկայացվել դիմում ք. Երևան, Փ. Բուզանդի փողոց, 13 շենք, 116 տարածք հասցեում գտնվող սպառման համակարգն Էլեկտրական ցանցին միացնելու վերաբերյալ:

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 25.12.2019 թվականի թիվ 523-Ն որոշմամբ հաստատված կանոնների 159-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն.

<<159. Պայմանագրի կնքման համար Դիմող անձը ներկայացնում է հայտ (տվյալ բաժնում այսուհետ՝ Հայտ), որը պետք է պարունակի հետևյալ փաստաթղթերը և տեղեկությունները.

4) պահանջվող ակտիվ և ռեակտիվ հզորությունը (դրվածքային և օգտագործվող), լարման մակարդակը, միացման տեսակը (միաֆազ, եռաֆազ), սպառման տեսակը (կենցաղային, ոչ կենցաղային), ոչ կենցաղային սպառման դեպքում նաև համակարգի տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև՝ Դիմող անձի կողմից պահուստային սնուցմամբ ապահովման ցանկության դեպքում՝ այդ մասին նշում (պահանջվող պահուստային հզորությունը չի կարող գերազանցել հիմնական սնուցման հզորությունը), 5) 0.4 կՎ և բարձր լարման Բաշխման ցանցին միանալու դեպքում՝ սպառման համակարգի Եսքիզը կամ տարածքի հատակագիծը՝ Սպառման համակարգի միացման կետի կամ կետերի նշումով,>>

Ձեր կողմից ներկայացված հայտի ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ Ձեր կողմից Ընկերությանը ներկայացված փաստաթղթերում առկա է ԷԲՑ Կանոնների 159-րդ կետի 4-րդ և 5-րդ ենթակետով պահանջվող տեղեկատվության հետ անհամապատասխանություն:

Մասնավորապես Ձեր կողմից Ընկերությանը չի ներկայացվել սպառման համակարգի տեղանքի հաստատված հատակագիծը՝ 0.4 կՎ ց/լ վահանի նշագրումով, ինչպես նաև Ձեր կողմից դիմումով պահանջվող 445 կՎԱ հզորության բեռի տեխնիկական բնութագիրը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ հայտնում ենք, որ Ձեր կողմից 18.05.2022 թվականին ներկայացված դիմումը ենթակա է մերժման:

Հասցե՝ ք. Երևան, Նորք Մարաշ, Ա. Արմենակյան 127

Հեռ.՝ +374-10-650086

Վեբ կայք՝ <https://www.ena.am/>

Էլ. փոստ՝ office@ena.am